№ 167 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10 **1899** ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10 № 167

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պէտք է բարեփոխել. Ամենահին հայերէն ձեռագիրը. Նամակ Դօնի շրջանից. Նամակ Վաղարշապատից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ախպէր Զոմարդը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԷՏՔ Է ԲԱՐԵՓՈԽԵԼ

Ուսումնարանական տարին սկսվում է, և աւելորդ չէր լինի ուշադրութիւն դարձնել մի քանի չարիքների վրա, որոնք վաղուց է, որ պէտք է վերցվէին մեր ուսումնարաններից, բայց անհոգութեան պատճառով դեռ գոյութիւն ունեն։ Խօսքս մեր ուսումնարանական մատենադարանների մասին է։ Թէ ինչ մեծ կարևորութիւն ունի աշակերտների ինքնակրթութեան համար ուսումնարանից դուրս ընթերցանութիւնը՝ այդ ակնյայտնի է. ուսումնարանը մարդուս չէ զարգացնում, այլ տալիս է իր սաներին այն սաղմը, որը զարգացնելը արդէն աշակերտի գործն է. դրա համար էլ մեր ուսումնարանները, ծխականներից սկսած մինչև Գէորգեան ճեմարանը, ունեն մատենադարաններ, հիմնարկութեան միջոցների ներածին չափ կազմված, որտեղից աշակերտները գրքեր են վերցնում կարդալու։ Բայց արդեօք այդ մատենադարանները իրանց կազմակերպութեան արդի վիճակում բերում են այն օգուտը, որ պէտք է բերէին. այս հարցին այժմից պատասխան է տրվում.—ոչ։ Պատճառը։ Եթէ աչքի առաջ առնենք, որ ընդհանրապէս մատենադարանը յանձնված է լինում ուսուցիչներից մէկին և սա երբեմն ունենում է մի կամ երկու օգնական, և ապա որ գիրք ցանկացողների թիւը ահագին է լինում՝ այն ժամանակ մեզ հասկանալի կը լինի մեր մատենադարանների բերած օգտի սակաւութիւնը և երբեմն էլ վնասակարութիւնը։

Գիրք բաժանելիս մատենադարանապետը հաշիւ պիտի տեսնէ մի քանի պայմանների հետ, որոնց իրագործմամբ միայն աշակերտը օգուտ կը ստանայ իր վերցրած գրքից. բայց այդ պայմանները իրագործել մի քանի հարիւր աշակերտի վերաբերմամբ՝ այդ այնպիսի մի դժուար գործ է, որ վեր է ուսուցչի ոյժից. մատենադարանապետի դրութիւնը շատ և շատ կասկածաւոր է. նա միշտ պատրաստ պէտք է լինի մի քանի օրից լսել աշակերտի բերանից, թէ այսինչ գիրքը չէ հասկացել։

Ի՞նչ է անելու։ Ամեն մի դասարանի համար մանկավարժական խորհուրդը նշանակում է մի դասատիարակ, որ հսկում է իրան յանձնված դասարանի վրա. նրան յայտնի պէտք է լինի ամեն մի աշակերտի գիտութեան չափը։ Արդ, ինչու չը պարտաւորեցնել այդ դասատիարակներին, որ նրանք, աչքի առաջ ունենալով ամեն մինը իրան յանձնված դասարանի աշակերտների կրթութեան չափը և մտաւոր կարիքները՝ առաջնորդեն սաներին դասարանից դուրս ընթերցանութեան մէջ իրանց խորհուրդներով. դասատիարակը ամեն մի աշակերտին առանձին խորհուրդ է տալիս կարդալ այս կամ այն գիրքը. աշակերտը գրում է գրքի անունը յուշատետրի մէջ և վերցնում է մատենադարանից կարդալու։

Գրքերի բաժանման այս եղանակով վերացվում է այն տրտունջը, որ բարձրացնում են աշակերտները մատենադարանապետի դէմ և ընդհակառակը։ Ընդհանրապէս պէտք է ասել, որ մեր ուսումնարանական մատենադարանների կարգաւորութեան խնդիրը մինչև այժմ բաց է եղել՝ և նրանք կառավարվում են երբեմն ճիշդ այնպէս՝ ինչպէս սրանից 25—30 տարի առաջ, հնացած ձևով, այսինքն աշակերտը գալիս պահանջում է այս կամ այն գիրքը, ստանում է և գնում. բայց թէ դրանից յետոյ ինչ է լինում, կարդում է արդեօք աշակերտը իր ստացած գիրքը և եթէ կարդացել է, կարող է ստանալ օգուտ նրանից թէ ոչ՝ դրանով հետաքրքրվող չը կայ։

Անհրաժեշտ է, որ մեր մանկավարժ-ուսուցիչները այս խնդրի վրա կարևոր ուշադրութիւն դարձնէին։

Արմենակ. Պ.

ԱՄԵՆԱՀԻՆ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳԻՐԸ

Մոսկվայի Լազարեան ճեմարանի վարչութիւնը ուղարկել է մեզ հետևեալ յայտարարութիւնը.

«Լազարեան ճեմարանի Արևելեան Լեզուաց հիմնական մատենադարանում պահվում է ի միջի այլոց մի գրչագիր, որ հնագոյնն է մինչև այսօր ծանօթ բոլոր հայ գրչագիրներից։ Նորա մասին շատ անգամ յիշված է եղել հայ գրչագիրների այլ և այլ նկարագրութիւնների մէջ և հայ հնագրութեան վերաբերեալ մասնագիտական երկերի մէջ. նորան նուիրված են եղել և մասնաւոր աշխատութիւններ։ Այդ՝ յիշեալ մատենադարանի № 1111 տպագիր ցուցակի մագաղաթեայ Աւետարանն է, որ գրված է խոշոր Մեսրոպեան կամ երկաթագիր տառերով ՃԼԶ. թուականութեան Հայոց և յամի Տեառն 887։

«Իբրև հնագոյն հայ գրչագիր՝ այս Աւետարանը մեծ կարևորութիւն ունի հայ հնագրութեան համար և մանաւանդ Նոր Կտակարանի քննագրի քննական ուսումնասիրութեան համար՝ ի նկատի առնելով նորա բազմաթիւ տարբեր ընթերցուածները. ոչ պակաս հետաքրքրական է և գրչագրի ուղղագրութիւնը։

«Լազարեան Ճեմարանի Մասնագիտական Դասարանների (Լիկէօն) Խորհուրդը՝ վաղուց ըմբռնելով հայ դպրութեան այս հազարամեայ յիշատակարանի կարևորութիւնը գիտութեան համար, միտք յղացաւ սորանից մի երեք տարի առաջ ամբողջութեամբ տպագրելու յիշեալ գրչագրի քնագիրը հանդերձ կարևոր լուսաբանութիւններով։ Բայց յետոյ՝ խորհելով, որ այս անզուգական գրչագրի հրատարակութեան մէջ անհրաժեշտ է պահպանել ամենայն ճշդութեամբ մինչև վերջին նշանախեցը, բոլոր նրա առանձնայատկութիւնները և դորանով միջոց տալ մասնագէտներին, որոնք անդադար դիմում են Ճեմարանի վարչութեանը քուն գրչագրի համար, սորա հաւատարմագոյն օրինակները ունենալ իրենց ձեռքի տակ։ Խորհուրդը վճռեց լոյս ընծայել ամբողջ գրչագիրը լուսատիպ նմանահանութեամբ։

«Լուսատիպ հրատարակութիւնը բաղկացած է 229 թղթից կամ 458 երեսից՝ մեծ քառածալ դիրքով, ընտիր թղթի վրա։ Գրքին կցած է և ընդարձակ առաջաբան։ Տպագրված են շատ սահմանափակ օրինակներ (միայն 300)։ Գրքի գինն է ճանապարհածախսով—20 ռուբլի (23 ռ. վերադիր վճարով) Ռուսաստանի համար և 60 ֆրանք արտասահմանի համար։ Դիմելու է. Լազարեան Ճեմարան, Մոսկվա, Въ Лазаревскій Институтъ Восточныхъ Языковъ, Москва».

Յայտարարութեան հետ մեզ ուղարկված է մի թերթ այդ լուսատիպ հրատարակութիւնից։ Նմուշը ցոյց է տալիս, որ Լազարեան Ճեմարանը իսկապէս մի նշանաւոր և թանգագին գործ է լոյս հանել, որ անշուշտ մեծ ուրախութեամբ կընդունվի հայ հնագիտութեամբ զբաղվողների կողմից։

ՆԱՄԱԿ ԴՕՆԻ ՇՐՋԱՆԻՑ

Կամենսկայա, օգոստոսի 29-ին

Դօնի զինուորական շրջանն էլ ազատ չը մընաց այս տարվայ երաշտից։ Երկրագործութիւնը, որ տեղացի կազակների միակ պարապմունքն է՝ մի քանի տեղեր հաստատ ոչինչ չը տուաց։ Ինչպէս յայտնի է՝ այս կողմերը ջրովի տեղ չը կայ։ Առատութեան ժամանակներում Կամենսկայան, իր շրջակայ ստանիցաներով հացի շտեմարան է կոչվում։ Անտագին քանակութեամբ ցորեն, հաճար, և այլն արտահանում էր ոչ միայն Ռուսաստանի, այլ և արտասահմանի յայտնի շուկաները։ Այժմ այն քախտաւոր ժամանակները չեն. կարծես մի հարուածով վերջ դրվեց ամեն ինչի. մաքրելու, զտելու հարիւրաւոր մեքենաները մնացել են ժանգոտած, իսկ պահեստի ամբարները դատարկ։ Եթէ չը հաշուենք չնչին քանակութեամբ Բօստով արտահանած հացահատիկները՝ այս տարվայ բերքը տեղական պահանջներին հազիւ բաւականութիւն կը տայ։

Շուտով, ինչպէս ասում են՝ մինչև այս տարվայ վերջերը, մեր երկաթուղիների ցանցերի վրա կաւելանայ մի նոր ճիւղ ևս, այն է Ցարիցինից։ Նոր ճիւղի առաւելութիւնը այն կը լինի, որ ձմեռը, երբ Դօն գետը սառչում է և հինգ ամիս նաւագնացութիւնը դադարում է՝ Ցարիցինի, Բոստովի, Նովոչերկասկի և Տագանրոգի մէջ կը լինի կաթ, հեշտ և անդադար երթևեկութիւն։

Մի քանի խօսք էլ այստեղ ապրող հայերի մասին։ Այստեղ կան մօտ երեսուն ընտանիք հայ վաճառականներ, ընդհանրապէս նոր-նախիջևանցիներ։ Ցաւելով պէտք է ասել, որ ոչ մի բարոյական կապ, առաջադիմութեան մի նշոյլ անգամ չը կայ սրանց մէջ։ Մեծերի համար չէ խօսքս. նրանք, բացի իրանց արշինից, կշեռքից, բամբասանքից, միմեանց ոտի տակ փորելուց ուրիշ բան չը գիտեն. ասելիքս երիտասարդութեան մասին է, որ ոչ մի բանով պակաս չէ «աղա»-ներից և շարունակում է մնալ դիւրահաւան, նախապաշարված։ Շատերից մի օրինակ։ «Մշակի» Ախալքալաքի թղթակից պ. Սալլիմեանը հրապարակով պախարակել է մի նոր տեսակի խաչագողութիւն, այն է Երուսաղէմի պատրաստի աղօթքներով աշխարհի կործանումից ազատվելը։ Այդ մերկացումները կարդալով՝ բոլոր ընթերցողները, ի հարկէ, միմիայն ծիծաղած կը լինեն խաչագողութեան վրա։ Իսկ այստեղ, ընդհակառակը։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս այստեղի երիտասարդներից շատերը փրկարար աղօթքը արտագրում էին «Մշակ»-ից և ցրվում իրանց նման տգէտների շրջանում։ Սրանք կարծես ներկայ դարում չեն ապրում. կարծես չինական պատերով շրջապատված լինեն, չը գիտեն ինչ է գրականութիւն, մամուլը, թէ ինչ է կատարվում իրանց շրջանից դուրս։ Բայց դրա փոխարէն գիտեն պնդվել, ունեցածչունեցածը շռայլել անբարոյական տեղերում և կանաչ սեղանի շուրջը...

Օտարական

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Օգոստոսի 4-ին

Հակառակորդից վրէժ լուծելու ոչ մի միջոց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԽՊԷՐ ԶՈՄԱՐԴԸ

(Պատկեր)

IV

Գալօն մի քանի բօպէ մնաց տեղնուտեղը աբձանացած, ձեռքերը խաչաձև ծալած։ Այդ ժամանակ նա կիսաձայն մրմնջաց «աքասի» մուխամբազի հետևեալ կտորը՝

Պարտքատիրոջ հոգին կը հանես,
Համ էլ դարդավարամ կանես.
Առանց թուխսի ճուտ կը հանես,
Թուժանիդ՝ մի աքասի։ *)

Յետոյ Գալօն խոր հոգոց հանեց։

Երևի նա երկար կը մնար դառն մտածմունքների մէջ թաղված, եթէ մօտից անցնող գիւղացու «բարի օր»-ը չը սթափեցնէր նրան։ Վերջապէս Գալօն ուշքի եկաւ և առանց երկար տատանվելու վազեց Կոստանդ աղայի ետևից։

Աղան դեռ նոր էր մտել բազը և սաստիկ հայհոյում էր ծառաներից մէկին դանդաղկոտութեան համար։ Գալօն առանց վախենալու համարձակ մօտ գնաց, չոքեց նրա առջև ու երեխայի նման սկսեց հեկեկալ։ Կոստանդ աղան նօթերը կիտեց, դիմքը խոժոռեց և ուզեց երեսը շուռ տալ, բայց Գալօն երկու ձեռքով ամուր բռնել էր նրա փէշերից։

—Աղա ջան, ոտներդ պաչեմ, գլխիդ մատաղ լինեմ, ինձ մի խայտառակի, իմ տուն ու տեղս մի ծախի, իմ անմեղ զաւակներիս դռնէդուռը մի գցի...

—Վեր կաց՝ կորիր, քաշվիր գլխից, ասում եմ, թէ չէ...

—Ի սէր Աստուծոյ, աղա ջան, խղճա ինձ...

—Տէր Աստուած, քեզ մեղայ. տնաքանդի տղայ, ոչ բարով փող եմ տուել քեզ, տուած փողս էլ յետ չուզեմ։ Այ մարդ, փողս տուր, փողս։

—Կը տամ, աղա ջան, հօրս գերեզմանը վկայ, կը տամ։

—Հիմա տուր տոկոսը, հիմա, այս բօպէիս ինձ փող է հարկաւոր...

—Ախր չունեմ, որտեղից տամ հիմա։

—Սև չհանանամից,—գոռաց աղան, չը կարողանալով այլ ևս բարկութիւնը զսպել, և, փորձելով փէշը Գալօի ձեռքից ազատել,—տունդ ծախիր, այգիդ ծախիր, ձիդ ծախիր...

—Վայ գլխիս,—դուրս թռաւ Գալօի բերանից, երբ լսեց աղայի ասած վերջին երկու բառը։

—Անունն այն է, որ ես փողատէր եմ, իսկ դու պարտքատէր. այս բօպէիս իմ գումարը մի քոստ եաքու էլ չը կայ, իսկ դու՝ թագաւորի վայել քահլան ձի ես պահում։ Եթէ դու աղքատ ես, քո ինչիդ է հարկաւոր 50—60 ամանէթանոց ձին։

Գալօն լուռ էր։

—Այ որդի, ես քո լաւն եմ ուզում, շարունակեց աղան ձայնը մեղմացնելով.—ինձ լսիր, ձիդ ծախիր, պարտքդ թեթևացրու, հոգիդ ազատիր ու քեզ համար մի հասարակ ձի առ՝ եօլա գնայ։

Կոստանդ աղան մի քիչ կանգ առաւ, որ նոր պապիրոս վառի։ Գալօն, կասես պապանձված լինէր։

—Այ, հիմի ինձ ձի է հարկաւոր,—շարունակեց աղան,—իսկ դու 120 ամանէթ փող ես պարտ, Զոմարդիդ տուր, որքան արժողութիւնն է պարտքիդ դուրս կը գամ, դեռ մի քանի ամանէթ էլ աւել կը հաշուեմ, քո խաթեր համար, իսկ մնացածի համար էլ շատ չեմ նեղի, որ օրը որ ունենաս՝ այն օրը կը տաս։ Թէ չէ կոպտութիւն կանես, ձիդ չես տայ, այդ էլ քո բանն է, միայն իմացած կաց, որ ես քո քէֆին չեմ մտիկ անի. էգուց-էլօր գլխիդ կը տամ, օրէնքով ձեռքիցդ կառնեմ։

Գալօն, որ մինչև այդ գլուխը կախ, խոր մտածմունքների մէջ էր ընկղմված, յանկարծ, կասես, շանթահար եղաւ. նրա ամբողջ մարմնով սառսուռ անցաւ։

—«Գլխիդ կը տամ, ձեռիցդ կառնեմ»—կրկնում էր Գալօն մտքումը,—այն էլ «օրէնքով», բայց մթթէ նա սուտ չէ ասում. մթթէ օրէնքը թոյլ կը տայ, որ ախպէրը ախպօրից խլեն, չէ՞ որ Զոմարդը իմ թև ու թիկունք ախպէրս է...

—Հը՞, Գալօ, ինչ ես ասում,—հարցրեց աղան,—ինձ մի հաստատ պատասխան տուր, ես առաւօտը շուտով գնալու եմ Ալէքսանդրօպոլ, հազար ու մի գործ ունեմ, թէ ձիդ տալու ես ասիր, թէ չէ...

Գալօի թեքված գլուխը փոքր ինչ բարձրացաւ, մարած աչքերը բացվեցին և նրա լուռ հայեացքը ուղղվեց աղայի մանր ու խորամանկ աչքերին։ Այդ միջոցին Գալօն իր յուսահատ դէմքով մարմնացած պաղատանք էր ներկայացնում։

Լռութիւնը համաձայնութեան նշան համարելով, Կոստանդ աղան Գալօի թևից քաշեց ու դժուարութեամբ ոտքի կանգնեցրեց նրան։

—Վեր կաց, որդի, վեր կաց. տեսնում եմ, որ դու խելօք տղայ ես. արի գնանք տուն, էնտեղ վերջացնենք մեր խօսելիքները,—ասաց աղան և շտապով սանդուղքներից վեր բարձրա-

*) Տասը ռուբլուն՝ քսան կոպէկ (ամեական). պարտքի տոկոսների հաշիւ է սա։

այն աստիճան ստոր, զզուելի չէ, որքան մեր գիւղերում ընդունված, և մինչև անգամ սովորական դարձած այն սարսափելի միջոցը, որը գործ է դնում թշնամին իր հակառակորդի վերաբերմամբ, հրդեհելով նրա խոտի դէզը կամ ցորենի բարդը:

Այս տեսակ մի դէպք օգոստոսի 4-ի երեկոյեան պատահեց այստեղ, որի ժամանակ չարագործը, գող կատուի յատուկ ճարպիկութեամբ, հրդեհելով Զաքար անունով մէկի խոտի դէզը՝ անհետացաւ գիշերային մթութեան մէջ: Խոտն ամբողջովին լափող կրակին ճարակ դարձաւ: Բարեբաղդութիւն էր միայն, որ Վաղարշապատի աչք կուրացնող քամին, կարծես հրաշքով, բացակայում էր նոյն երեկոյեան. թուփ անգամ չէր շարժւում, ապա թէ ոչ կայրվէին այն ամենը, որոնց կտուրի վրա դիզված էր խոտը,—մի անմիտ սովորութիւն, որն ընդհանրացած է մեր բոլոր գիւղերում և որը, բացի վնասից, ոչ մի օգուտ չէ տալիս:

Այսօրինակ դէպքերը գալիս են յիշեցնելու անցեալի դաժն պատկերները, որոնք ականատեսի համար անջնջելի դրոշմ են կրում: Սրանից չորս տարի առաջ, Կարինից դէպի Ալաշկերտ արած ճանապարհորդութեանս ժամանակ՝ այդպիսի մի սարսափելի դրաժայի ականատես եղանք, որն աւելորդ չենք համարում այստեղ յիշել:

Պարզ, լուսնեակ գիշեր էր, այնպիսի մի գիշեր, որի խաղաղութիւնը, բացի գիւղացու կոշտաձայն հառովէլներից՝ ոչ մի ուրիշ ձայն չէր խառվում: Մենք սայլերով առաջ ենք գնում. ճանապարհի աջ կողմը, մի տափարակ տեղի վրա, փռվել էր մի ցորենի արտ, որի մէջ թւով 10-ից աւելի բարդ կար տնկած. ցողուններից երևում էր, որ գիւղացին նոր էր իր հունձը վերջացրել և դուրս եկել: Գիշերվայ ժամի 10-ը կը լինէր. գիշերվայ նոյն խոր լռութեան մէջ յանկարծ մեր ուշադրութիւնը գրաւեց մի ինչ որ տարօրինակ, որն օգնութիւն էր կանչում. ձայնը մեր ընկերներից էր: Ցետ ենք դառնում և ինչ տեսնում.—մի ստուեր, մի բուռն կրակը ձեռքին, սատանայական շտապ գործողութեամբ, վազվզելով բարդերի առաջ, կրակ է դցում նրանց մէջը մէկը միւսի ետևից: Մինչ մենք գոռում-գոչումով հաւարի ենք վազում՝ նա անընկիւղ հրդեհելով արտի մէջ գտնվող 10-ը բարդեր, մի ակընթարթում անյայտացաւ մօտակայ մացառների մէջ: Զուր էին մեր մանրակրկիտ խուզարկութիւնները յանցաւորին ձերբակալելու համար—նա մի ասեղ դարձաւ:

Ուշ գիշերին հասանք Զէյտկան կոչված հայաբնակ գիւղը, և երբ կատարված դառն իրողութիւնը գիւղացիներին պատմեցինք՝ մի խեղճ, աղքատ գիւղացի «վայ լըմըն բաւս, իմ տուն քանդվաս, այրվողը իմ արտն է» գոռալով, երեսի վրա վայր ընկաւ: Նոյն գիշերվայ տխուր տպաւորութիւնը ես չեմ մոռացած:

Ա. Տէր-Ներսէսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ալէքսանդրօպոլ, սեպտեմբերի 7-ին

Կարդալով «Մշակի» 161-րդ համարում խմբագրութեան ուղղած մի նամակ Ա. Իսահակեան ստորագրութեամբ, ես պարտք եմ համարում իմ դատս, իբրև հասարակական գործիչ, դնել հայ հասարակութեան առաջ, որ նա դատէ:

Ես այսքանը կասեմ, որ Աստուած է միայն կատարեալ, իսկ մենք՝ մարդիկս, ոչնչութիւն ենք և սխալական: Թէ ինչից է սկսվել իմ սէրը օրիորդ Զիթողցեանի հետ, այդ ես աւելորդ եմ համարում բացատրել. միայն ոչ «Ասլան-Բալասի» էֆֆէկտաւոր դերից, որովհետև նա ինձ չէ տեսել այդ պիէսում:

Իսկ գալով փախցնելուն, ես հիմնովին հակառակ եմ եղել. քանի-քանի անգամ խնդրել եմ օրիորդին, որ յետ կանգնի այդ մտքից, առաջարկութիւն անել, բայց նա լսել անգամ չէր ուզում, ասելով թէ ինքը յայտնել է իր ազնեցիներին և նրանք յօժար կամքով չեն համաձայնվի մեր ամուսնութեան: Ես չը գիտեմ թէ ուրիշները ինչ կանէին՝ բայց ես սիրելով նրան, խոնարհվեցի նրա խօսքերի առաջ—և տարայ: Ահա իմ բոլոր սխալմունքը, որի համար հրապարակով խնդրում եմ յարգելի Զիթողցեանների ներողամտութիւնը:

Այժմ ձեզ հետ է իմ գործը, պ. Ա. Իսահակեան. դուք ցանկացել էք եղելութեան ատաուը ցոյց տալով, արձագանք լինել հասարակութեան զայրոյթին և բողոքին: Շատ լաւ: Թէև դուք ինտելիգենտ էք կարծում ձեզ և յանուն ճշմարտութեան իմ վարմունքս ստոր և զզուելի համարում, բայց, յարգելի պարոն, դուք ճանաչում էիք ինձ և քիչ թէ շատ մտերիմ էինք. մեզ երբ որ փախուստի տեղից յետ բերին, միւս օրը առաւօտեան, երբ ես անցնում էի կառքով, այն ինչ ոգևորութիւն էր, որով դուք ողջունեցիք ինձ: Նոյն օրը երեկոյեան, դուք, պ. Իսահակեան, ձեզ հետ վերցրած մի քանի ուրիշ երիտասարդներ, եկաք իմ տուն, համբուրվեցիք ինձ հետ, մխիթարում, խրախուսում և գովաբանում էիք իմ վարմունքը: Ինչու՞ հետևեալ օրը եկաք ինձ մօտ և խորհուրդ տուիք դիմել դատաւորին, դիմել առաջնորդարան և աղջիկը ծնողներից պահանջել օրէնքով: Մենք երկուսս չէ՞ որ միասին գնացինք, բայց այդպիսի օրէնք չը գտանք. և դուք չէիք որ Զիթողցեանների հասցէին ասում էիք, թէ նրանք վայրենիներ են, սէրը և զգացմունքը փողի և հարստութեան մէջ են տեսնում: Ես այժմ չողոքորթում էք նրանց. ինչու՞, որովհետև պատճառը շատ պարզ է, և նրա մասին խօսում է ամբողջ Ալէքսանդրօպոլը: Դուք ինձ խնդրեցիք պատմել մեր սիրահարութիւնից մի քանի բաներ. ես պատմեցի թէ ինչպիսի սիրով սիրում էինք միմեանց և մանաւանդ այն դէպքը, երբ մեզ եկան գիւղում բռնեցին և երեք հոգով վրա ընկնելով ծեծում էին, օրիորդը դուրս թռաւ սենեակից և պաշտպանում էր ինձ՝ ասելով եղբօրը և ծառաներին—«ինչու՞ էք ծեծում նրան, ես նրան սիրում եմ, իմ կամքովս եմ փախել և դուք իրաւունք չունէք նրան ծեծելու»: Այդ խօսքերը լսելով, դուք գնացիք և այլ ևս չեկաք ինձ մօտ. և մի նամակ ուղարկեցիք ինձ այնպիսի կոպիտ խօսքերով լի, որ ինտելիգենտ մարդը իրան թոյլ չէր տայ երբէք:

Ի միջի այլոց դուք ենթադրում էք, որ ես շահագործել եմ օրիորդի սիրոյ էքստազը՝ կամեցել եմ փախցնել, անպատուել, և պահանջել ծնողներից խոշոր գումար ամուսնանալու համար: Որքան ստոր միտք: Ես սակայն դուք, պարոն, այդպիսի լուրեր քաղաքում տարածելուց յետոյ, գնացիք օրիորդի ծնողների մօտ: Ինչու՞ համար—այդ հո դիտեք մենք:

Վերջացնելով նամակս, ես կուզեմ մի երկու հարց դնել հայ հասարակութեան առաջ, որ նա դատէ ինձ և ազնիւ պ. Ա. Իսահակեանին: Եթէ ես շահադիտական նպատակով եմ արել այդ բանը, ինչպէս ես չէի մտածի, որ փախցնելուց յետոյ օրիորդի ծնողները կարող էին իրանց աղջկայ անունն անգամ չը տալ՝ և ոչ թէ հարուստ օժիտ: Երկրորդ՝ եթէ իմ նպատակս ազնիւ լինէր, ես կարող էի միւս օրն և եթ հեռանալ Ալէքսանդրօպոլից և օրիորդի անունն անգամ չը տալ:

Ազնիւ պ. Ա. Իսահակեան, ցինիկ խօսքեր և պարծենկոտութիւն էք համարում իմ մի քանի խօսքերը, որոնք իբրև խոստովանանք ասել եմ ձեզ՝ և իմ մի քանի մտերիմ ընկերներին. իսկ դուք դուրս եկաք տարածեցիք...—Աստուած ձեզ... Բայց չէ՞ որ անկեղծութիւնը—սրտի պարզութիւնն է և շատ քչերն ունեն այդ: Թող ընթերցողը դատէ:

Դերասան Ց. Ստեփանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ Կոստրօմայի ազնուականների ժողովը որոշում է կայացրել՝ դիմելու բարձր իշխանութեան և խնդրելու, որ կանանց նոյն իրաւունքները տրվեն ժառանգութեան ստանալու վերաբերմամբ, որպիսի իրաւունքներ ունեն տղամարդիկ:

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, հրատարակելով նահանգական խորհրդակցութիւնների եղրակացութիւնների մի ժողովածու՝ գիւղական ազգաբնակութեան կենցաղավարութեան ըէֆօրմների վերաբերմամբ, առաջարկեց այդ հարցով բոլոր հետաքրքրվողներին ուղարկել զեմստվօի բաժանմունքը իրանց կարծիքները: Ներկայումս այդ բաժանմունքը, ինչպէս հաղորդում են ռուսաց լրագիրները, իր տրամադրութեան տակ ունի մի ընդարձակ նիւթ, որ բաղկացած է զանազան կարծիքներից, խորհրդածութիւններից և մինչև անգամ ամբողջ նախագծերից: Այդ նիւթերը ուղարկել են ազնուականութեան պարագլուխները, զեմստվօի գործիչները, գիտնականները և գիւղական կեանքի հարցերով հետաքրքրվող անձինք: Այդ բոլոր գրութիւնների և նախագծերի մէջ գլխաւորապէս շեշտվում է այն հարցը՝ թէ անհրաժեշտ է գիւղական վարչութեան պատկանող անձանց բարոյական դրութիւնը և հեղինակութիւնը բարձրացնել՝ ազատելով նրանց պատիժներից, որոնք գցում են նրանց վարկը ստորադրեալների աչքում. բացի դրանից պէտք է նիւթապէս ապահովութիւն տալ նրանց, որպէս զի տանուտէրերը և աւագները կարողանան ամբողջապէս նուիրվել հասարակական ծառայութեան, և ուրիշ գործերով չը պարապեն: Նախագծերից մի քանիսի մէջ առաջարկվում է դատարան և դիւանատուն հիմնել իւրաքանչիւր գիւղում. մանաւանդ դիւանատուն հիմնելը անհրաժեշտ է համարվում, որովհետև բերանացի դատավճիռները մեծ չարիք են գիւղական ազգաբնակութեան համար: Բերանացի վճիռները մեծ ասպարէզ են տալիս տանուտէրների կամայականութիւններին: Անհրաժեշտ է համարվում թոյլ տալ գիւղական ինքնավարութեան պատկանող անձանց ապահովագրել իրանց կայքերը՝ ապահովելու համար նրանց հրձիգութիւններից, որոնք վրէժխնդրութեան միջոց են համարվում դժգոհ գիւղացիների կողմից:

—

«Русск. Вѣд.» լրագիրը լսել է, որ Մոսկվայի հատուկ խարանի իրաւաբանական ֆակուլտէտը միաձայն վճռեց դիմել պրոֆէսօր Ա. Զուպրովին և խնդրել, որ նա յետ վերցնի արտասահմանից ուղարկած իր հրաժարականի խնդիրը: Բացի դրանից ֆակուլտէտը դիտաւորութիւն ունի միջնորդել՝ երկարացնելու պրոֆէսօր Զուպրովի արձակուրդը, մինչև որ կը վերականգնվի նրա առողջութիւնը, իսկ քաղաքատնտեսութեան և ստատիստիկայի դասախօսութիւնը ժամանակաւորապէս յանձնել երկու պրիվատ-դոցենտներին:

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 4-ին, երկար հիւանդութիւնից յետոյ, իր գիւղում վախճանվեց տեղապահ Սարգիս եպիսկոպոսը: Անցեալ կիրակի, վանքի մայր եկեղեցում, նրա և Ալէքսէեան եպիսկոպոսի ժամվան առիթով պատարագ մատուցվեց, որից յետոյ Սուքիասս եպիսկոպոս Պարզեանց մի ճառ խօսեց, հաւաքօտ կերպով նկարագրելով երկուսի կեանքն ու գործունէութիւնը»:

—

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 2-ին, քաղաքային կլուբի դահլիճում, դերասանուհի տ. Ազնիւ և դերասան պ. Անդրանիկ խաղացին «Մկնիկ» վոդէվիլը և յետոյ պ. Անդրանիկ երգեց «Խելագարը»: Վերջինը անաջող անցաւ: Պ. Անդրանիկ մոռացել էր, որ «Խելագարը» կատարելու համար հարկաւոր է ձայն և շարժուածք, որոնցից ինքը զուրկ է»:

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Ենք է... առանց այդ էլ Ղազարապատի մթնոլորտը հոտած ու փտած է, որտեղ արտաքնոցի գարշելի հոտի պատճառով, հիւրերը ողջ ու առողջ մտնում, տկար ու հիւանդ դուրս են գալիս: Ամենից շատ շոքից տուժողները մի քանի տեղերից եկած տիրացուներն են, որոնք քահանայ ձեռնադրվելու յուսով ամիսներով վեհարան ու սինոդ քարշ են գալիս, չիմանալով թէ ինչ պիտի լինի իրանց վերջը: Լսում ենք, որ անցեալները դիմում արել են Վեհափառ Կաթողիկոսին, որ շուտով իրանց քահանայ ձեռնադրէ ու իրանց տեղերը ուղարկէ: Վեհափառը «չոք է» պատասխանելով՝ ձեռնադրութիւնը յետաձգել է: Վանքի ընթերցարանի մասին աւելորդ ենք համարում խօսել, որովհետև շաբաթներով, ամիսներով փակ է ուղղակի այն պատճառով, որ յաճախող չը կայ: Խնդրում ենք այդ մասին ուշադրութիւն, որովհետև եթէ ընթերցարանը վանականների համար աւելորդ բան է, գոնէ մեծ նշանակութիւն ունի այցելուների համար, որոնք ցանկանում են այս լքացած կեանքի մէջ գտնել մի փոքրիկ վիխթարութիւն:»

—

Ջիբրայելի գաւառի ԱՌԱՔԵԼ գիւղից մեզ գրում են. «Սեպտեմբեր ամիսն է, ամեն տեղ ուսումը սկսվում է, իսկ մեր գիւղացին զուրկ է դպրոցից: Մեզ հետ տասնեակ գիւղեր հարիւրաւոր երեխաներով զուրկ են ուսումնարանից: Գիւղացին կրթութեան կարիք ունի. նա զգում է այդ, նա ուղարկում է իր որդուն մի «այբ» ու «բէնի» հետ առած ժանրավաճառի կամ մի դժբախտ տիրացուի մօտ, որոնք շատ-շատ մի բարևգրի ու մի պարտաւորչական գրելու ձև են կարողանում սովորեցնել իրանց «ժունթին»: Այս տարի էր, կարծեմ, որ մեր յարգելի գաւառապետը կանչել էր մի քանի գիւղերից մարդկանց ու առաջարկել ուսումնարան բանալ, յայտնելով իր պատրաստակամութիւնը օգնել նրանց այդ գործում: Գիւղացիներին շատ դուր էր եկել պ. գաւառապետի առաջարկութիւնը: Նրանք սկսեցին յարմար տեղ որոնել ուսումնարանի շինութեան համար. գտնվեցան մարդիկ, որոնք խոստանում էին շինութեան տեղը ձրի զիջանել, ոմանք փողով նուէրներ էին խոստանում և այլն: Սակայն կամաց-կամաց հարցը սառեց ու մի առ ժամանակ մոռացութեան տրվեց: Այժմ յարմար ժամանակ է՝ հարցը նորից բարձրացնելու ու գործը գլուխ

նալով պատշգամբը, մտաւ մի փոքրիկ սենեակ:

Գալօն ձեռքերը ծալած, ստուերի պէս հետևում էր նրան: Սենեակի դրան առջև նա տրեխները սրբեց և մի բօպէ կանգ առաւ, չը համարձակվելով ոտնամանները հագին ներս մտնել. բայց երբ աղան կանչեց, Գալօն չոր տրեխները մէկ էլ քսեց պատշգամբի տախտակներին, անհամարձակ քայլերով ներս մտաւ ու դրան տակին ցցվեց:

—Դէ՛հ, Գալօ ջան, ասա տեսնենք որքան արժէ քո Զօմարդը,—ասաց աղան, ձեռնափայտը լուսամուտի մի անկիւնում տեղաւորելով ու ինքն էլ մի կաղ աթոռի վրա նստելով,—քառասուն մանէթ, բաւական է:

Գալօն նորից ցցվեց:

—Զօմարդը, աղաջան, ծախու չէ,—վերջապէս խօսեց նա խուլ ձայնով,—նա իմ տունը, իմ երեխաները պահողն է. մի խօսքով, նա իմ խպէրս է, ես չեմ կարող նրանից բաժանվել. Աստուած ինձ կը պատժէ, եթէ ես նրան ծախեմ:

—Ցիմար բաներ մի խօսի, Աստուած միայն պարտքը չը տուողին՝ ուրացողին է պատժում, իսկ պարտաճանաչ՝ նամուսով մարդուն, ընդհակառակը, քաղցր աչքով է մտիկ տալիս: Պարտքը ուրանալը, տոկոսներ չը տալը, կամ ուշացնելը Աստուած մահացու մեղք է համարում:

Տասը պատուէրներից ամենագլխաւորը պարտքը տալու մասին է: Զէ, որդի, չէ. ինչ կանես արա, միայն թէ պարտքդ մի ուրանայ, բոլոր ունեցած չունեցածդ, մինչև անգամ մանր երեխաներդ ծախիր ու պարտքդ վճարիր, թէ չէ, էն աշխարհումը չես կարող պատասխան տալ, մեղք ես:

Աղան լռեց և պատասխանի էր սպասում: Լուռ էր և Գալօն:

—Չեմ ծախի, աղա ջան, Զօմարդիս չեմ ծախի, ասաց նա.—անկարելի բան է, քանի որ ես սաղ ու կենդանի եմ նրա ոտը իմ տանից չի կտրվի. նրա գլուխը իմ տան չէվքում պիտի թաղվի: Միայն...

—Ցետո՞յ:

—Միայն քրէհով կը տամ, աղա ջան: Ամեն ժամանակ, երբ որ սիրտդ կը ցանկանայ, նըստիր, բանացրու. իսկ քրէհը, դու ու քո Աստուածը, կը հաշւես ու պարտքիցս կամաց-կամաց դուրս կը գաս, մինչև տեսնենք, թէ Տէրը ինչ է աչողում:

Կոստանդ աղան ուրախութեամբ համաձայնվեց և մինչև իսկ սկսեց օրհնել նրան:

—Ապրիս, որդի, հիմա խելօք ես խօսում. ես էլ հո անիրաւ չեմ, որ քեզ նեղացնեմ: Վնաս չունի, որդի, գիտեմ, լաւ ապրանք է ձեռքդ ընկել ու մի անգամ էլ սիրտդ վրան տաքացել է, չես ուզում ձեռից թողնել: Ես քեզ չեմ մեղադրում: Թող քո ասածը լինի. ամեն անգամ, պէտք գալիս, քո ձին կը տաս, կը նստեմ ու քրէհը պարտքիդ տեղը կը հաշւեմ:

—Բայց, աղա ջան, խնդրում եմ խօսք տուր, որ էլ դանդատ չես անի... խղճա՛ ինձ, ոտներիդ մատաղ. իմ նամուսը ջուրը մի գցի, ինձ մի խայտառակի...

—Գնա բանիդ, անհոգ կաց, որդի. ես անաստուած հո չեմ... իմ բարձր անունիս, իմ աղայութեանս ինչ է եկել, որ ես իմ թքածը լիզեմ:

Գալօն արագութեամբ սանդուղքներից ցած իջաւ և, համարեա վազելով, անցաւ լայն բակը: Նա այնպէս էր շտապում այդ տան պատերից դուրս գալ, կասես, այդտեղի մթնոլորտը նրան խեղդում կամ այրում էր: Վերջապէս նա իրան փողոց գցեց ու այդտեղ միայն իր ամբողջ կրծքով ազատ շունչ քաշեց: Գալօն այնպէս էր ուրախացել, նրա սիրտը այնպէս էր թեթևացել, որ կասես մի ահագին ջաղացքար վերցրած լինէին նրա կրծքից: Ուրախ էր, որովհետև այլ ևս նամուսը չի կորցնի, չի խայտառակվի. բացի դրանից՝ չի զրկվի իր անմման Զօմարդից, իր ջան ու ջիգար եղբօրից:

Գալօն ուղղակի վազեց տուն, որ սրտի ուրախութիւնը իր մտերիմների հետ բաժանէ: Ձին դեռ ևս բաղում ախորժակով ծամում էր եօնջայի մնացող կտորտանքը: Տիրոջ ոտնաձայնը լսելուն պէս՝ նա գլուխը բարձրացրեց, բաշը թափահարեց, և ուզեց առաջ գնալ, որ դիմաւորէ իր սիրելի տիրոջը, բայց սանձը նրան զսպեց: Գալօն երկու քայլով մօտեցաւ ձիուն, փարվեց նրա շլինքով և սկսեց պաչպչոտել նրա սիրուն աչքերը, նախշած ճակատը: Գալօի փոքր աղջիկը՝ Սաթօն, որը բագի մի կողմում հողը փորփորում էր, տեսնելով հօրը՝ թողեց կիսատի գործը, հոդաթաթախ վազեց հօր մօտ և ինքն էլ ոտների ծայրերի վրա բարձրանալով, սկսեց պաչպչել Զօմարդի կուրծքը: Գալօի սիրտը փքլեց, կոկորդը սեղմվեց, արտասունքը աչքերը լցրեց. նա ուզում էր լացել, բայց ամաչեց, մի կերպ իրան զսպեց, բռնեց աղջկայ թևից ու հեռացաւ ձիուց:

Նա գնաց կնոջ մօտ, որը հացատան դրան առջև արևում նստած ճախարակ էր մանում: Գալօն ինքն էլ նստեց նրա կողքին և մանրամանրաբար պատմեց նրան ամեն ինչ: Սօփին, այդպէս էր Գալօի կնոջ անունը, շատ ուրախացաւ պատմութեան վերջաբանը լսելով և սկսեց երկար ու բարակ օրհնել աղայի ու նրա որդկերանց կեանքը:

(Կը շարունակվի)

բերելու։ Այս տարվայ բերքը բաւարար է, եթէ լաւ չասենք, ուրեմն կարելի է և դպրոցի մասին մտածել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, օգոստոսի 30-ին

Անցեալ 14-ին Թէհրանում կայացած խնջոյքով, ուր ներկայ էին Էնզէլի-Թէհրանեան խճուղու Մոսկվայից եկած ներկայացուցիչները, տեղիս կառավարիչը և գործավար անդամները, ռուսաց դեսպանը և բարձրաստիճան հիւրերը՝ պաշտօնապէս բացված համարվեց Էնզէլի-Թէհրանեան ճանապարհը։ Այդ խճուղու վրա Մանջել կոչված մեծ կամուրջը արդէն վերջացած է, որը անագին ծախս նստեց ընկերութեան վրա, չնորհիւ տեղական ծանր պայմանների։ Ամսիս 26-ին բացվեց այդ կամուրջի մօտ գտնված պահականոցը։

Ուրեմն սեպտեմբերի մէկից ընկերութիւնը իրաւունք է ունենալու ճանապարհային հարկ առնել, ոչ թէ քառորդ մասի համար, որ մինչև այժմս էր առնում, այլ կէս մասի, ճիշդ ասած՝ ընկերութեան չինած ճանապարհի ամբողջ մասի համար։ Ամբողջ մասի եմ ասում, որովհետև ընկերութիւնը ճանապարհը չինել է ոչ թէ մինչև Թէհրան, այլ մինչև Ղազվին. իսկ Ղազվինից մինչև Թէհրան վաղուց արդէն չինված է, բայց այժմս անցել է նոյն ընկերութեան ձեռքը զանազան պայմաններով։ Միւս պահականոցների չինութիւնը դեռ չէ աւարտվել։

Այս ճանապարհը, որ կապում է Կասպից ծովը պարսից մայրաքաղաքի հետ, բաւական նպաստաւոր կարող է լինել Ռուսաստանի վաճառականութեան։ Առ այժմս թէև պօստային երթևեկութիւնը կատարվում է կառքով, փոխանակ նախկին «չափարի» ձիերի, բայց ապրանքների տեղափոխութիւնը դեռ շատ կը շարունակվի բեռնակիր անասուններով։ Ձիապանները, ուղտապանները շատ նեղվում են վճարի կողմից, որովհետև նրանք ստիպված են ճանապարհի և զանազան տուրքեր վճարել ոչ միայն ռուսաց պահականոցին, այլ և պարսից զանազան պաշտօնեաներին։

Ցաւոտի է, որ Պարսկաստանում մաքս է առնվում այն ամեն ապրանքից, որ մէկ քաղաքից մտնում է միւսը։ Մաքսատունը քաղաքումն է, ուր վճարելով որոշված մաքսը, ձիապանը առնում է անդորրագիր և հազիւ դուրս է դնում ոտքը քաղաքից՝ քաղցած գայլերի նման վրա են թափվում և շրջապատում դրան միևնոյն մաքսատան պահապան ծառաները, որ քաղաքից դուրս հսկում և ցուցակագրում են քաղաքից ներս և դուրս եկած ապրանքները։ Այստեղ խաբելով առնում են խեղճ ձիապանի ձեռքից անդորրագիրը և չեն վերադարձնում, մինչև նրանից մի քանի դրան չը խլեն։ Այդտեղից մի կերպ ազատվելով՝ ռուսաց պահականոցին է վճարում, մի խօսքով մինչև Ղազվին հասնելը 4—5 տեղ խեղճից առնում են թէ տեղի, և թէ անտեղի։

Այդ էլ դեռ բաւական չէ։ Մեր նահանգապետը մի լաւ եկամուտի աղբիւր է ճարել իր համար, այդ այն է, որ բոլոր չարվադարները կապալով տուել է մի ինչ-որ խանին. նրանից ստանում է 3500 թուման և տալիս է նրան իրաւունք իւրաքանչիւր անասունից 5 շահուց մինչև 2 դրան առնել։ Այս էլ մի հարկ չարվադարների համար։ Բայց երևակայեցէք ձեզ, ընթերցող, այդ օգտաւէտ կապալը ձեռք ձգելու համար օրէցօր նորանոր մարդիկ են դուրս գալիս և ատիճանաբար արժէքը բարձրացնում են. այժմս մի քանի ամսվայ մէջ հասաւ 7000 թումանի։ Թեղճ չարվադարները արցունք են թափում։ Այսօր լսեցի, որ մի խումբ վաճառականներ, նախկին կապալառուի հետ, յայտնի հոգևորական—Շարիաթ-Մադարի միջնորդութեան և աջակցութեան են դիմել այդ մաքսը վերացնելու համար։ Այդ մասին հեռագիր է խփվել Թէհրան։

Համարեա ինքը ամիս է՝ ընկերութեանը չէ աջողվում խճուղուց արտաքսել պարսիկ մաքսահաններին, որոնք մի քանի ժամանակ անյայտանում են, մի քանի ժամանակից յետոյ դարձեալ յայտնվում են և սկսում են փայտի և բուունցքի ուժով առնել ամեն անցորդից այնքան՝ ինչքան իրանք են կամենում։ Նրանք հրնձում են իրանց հունձը մինչև ընկերութիւնը իմանում է և միջոցների է դիմում օրինաւոր ճանապարհներով նրանց հեռացնելու։ Անցնում է մի քանի ժամանակ և սա դրանք դատաւորներին կաշառք ուտեցնելով, նորից բանում են կամ նոյն տեղում և կամ մի ուրիշ տեղում։ Ընկերութիւնը ջանք է գործ դնում, որ վերացնէ թէ չարվադարների տուրքը և թէ պարսից պահականոցները, այլապէս նրան երբէք չի աջողվի ձեռք բերել այն անագին գումարը, որ գործադրվեց այդ ճանապարհի շինութեան վրա, որովհետև աւելանալով տուրքերը, կը պակասի բեռնակիրների երթևեկութիւնը և կը թանգանան ապրանքների քրէհները և ապրանքները, ուրեմն և ճանապարհը չէ կարող ծառայել ռուսաց մրցութեան չահերին՝ իր ապրանքների էժանութեան կողմից Պարսկաստանում։ Իսկ կառքերի և ֆուրգոնների երթևեկութիւնը այնքան էլ հեշտ չէ, մանաւանդ որ նրանց վրա ևս կան նոյն տուրքերը, գուցէ և աւելի։

Ճանապարհը սկսվում է Փիրաբազար գիւղից, որը «Մորդաբ» ծոցից եօթ վերստ հեռու է, և այդ տարածութիւնը անցնում են համանուն գետի վրայով նաւակներով, որ անագին անյարմարութիւններ է ներկայացնում. նախ՝ որ գետաբերանը չափազանց ծանծաղ լինելով՝ նաւակը կպչում է յատակին և օրերով ապրանքը մնում է, մինչև մի ուրիշ նաւակ է պատահում և ապրանքի մի մասը իր վրա առնում. իսկ գետի վրայով թիավարները թոկով կապում են և մի քանի ժամ շարունակ քաշում, դժոխային նեղութեամբ հասցնում են Փիրաբազար, ուր և անյարմար ամբարների և մշտական ճանիճների մէջ գողացվում, փտում և փչանում են վաճառականի բեռները։ Այդ բոլոր անյարմարութիւնները ի նկատի առնելով՝ ընկերութիւնը նախապատրաստութիւն է տեսնում այդ ճանապարհը փոխել Մուժարաքեաբաթ կոչված ծովափնեայ գիւղը, որտեղ աւելի յարմար է կամուրջ չինել, այնպէս որ ուղղակի շոգենաւակը կանգնի կամուրջի մօտ։

Մի քանի օր անընդհատ տեղացող անձրևները բոլորովին կենդանացրին մեռած բուսականութիւնը, թէև բրնձի համար շատ քիչ օգտակար, քանի որ արդէն քաղելու ժամանակն է։ Բայց մի քանի տեղեկութիւններից երևում է, որ շատ արտեր չեն փչացել, ինչպէս կարծում էին։

Երէկ, քաղաքապետի հրամանով, բանտում խեղդեցին թոկով մի բանտարկեալի, որը մի քանի ժամանակ առաջ միանալով մի կնոջ հետ՝ սպանել էր նրա մարդուն։ Կարծես մի փոքր քաղաքակրթվում են պարսիկները, որովհետև վերջին տարիներում շատ քիչ են կատարում այն բարբարոս պատիժները, որ կատարում էին առաջ, օրինակ՝ թնդանօթի բերան դնել, ցցի բարձրացնել, մէջտեղից ոչխարի նման կէս անել, և այն էլ ընդհանուրի ներկայութեամբ, բոլորի վրա սարսափ տարածելու համար. բայց այժմ այդ կատարվում է բանտի մէջ ծածուկ, խեղդամահ անելով և կամ գլուխը կտրելով, մանաւանդ ներկայ քաղաքապետի օրով։ Սկզբում սովորութիւն էր, որ մի մահապարտի պատժելուց յետոյ դահիճը, արիւնոտ դանակը ձեռքին բռնած՝ խանութներից փող կը հաւաքէր, իսկ այժմս այդ ևս արգելել է և դրա փոխարէն ինքը միանուագ մի գումար է նուիրում դահճին։ Սրբանից մի քանի օր առաջ պատահած ալեկոծութեան պատճառով մի քանի նաւակներ բեռներով ջրի մէջ խորտակվեցան։ Մարդկային զոհեր չեն եղել։ Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մի քանի լրագիրներ հաղորդում են, որ օգոստոսի 31-ին, մինիստրների խորհրդում, հաւանութիւն բոլոր մինիստրները, մինչև անդամ Գալլիֆէ, այն կարծիքը յայտնեցին, թէ պէտք է ներումն չնորհել Դրէյֆուսին. բայց հանրապետութեան նախագահ Լուբէ կտրականապէս հակառակվեց այդ դիտաւորութեանը ասելով, թէ հարկաւոր է մի ուրիշ աւելի յարմար րոպէ ընտրել դրա համար, որովհետև ինքն, նախագահը, չէ կարող ներումն չնորհել դատապարտվածին իսկոյն և եթ զինուորական դատարանի արձակած դատավճռից յետոյ։

—«Kölnische Zeitung» լրագրին հեռագրում են Բելգրադից, թէ մեղադրվողներից մէկը՝ Կրէզովիչ հետևեալն է յայտնել. «Ես եկել եմ Սերբիա չերնոգորիական իշխանի յանձնարարութեամբ և Պետր Կարագիորգիևիչի խնդիրքով, իմանալու, թէ արդեօք չէ կարելի հեռացնել Օբրէնովիչների տոհմը և փոխարինել նրան Կարագիորգիևիչների տոհմով»։ Նա որպէս թէ եղել է արժատականների կուսակցութեան տպարանում, տեսակցութիւն է ունեցել այնտեղ Ստանովիչի և Տաուշանովիչի հետ, որոնք իբր թէ ասել են նրան, որ թող միամիտ լինի Տախիչ, Սերբիայում ամեն ինչ պատրաստ է յեղափոխութեան համար։ Կրէզովիչի մատնանացոյց արած անձերը՝ նրան ստախօս անուանեցին։

—«Times» լրագիրը հաղորդում է, որ Կրիգերին ուղարկված ուլտիմատումը պարունակում է իր մէջ հետևալ չորս կէտերը. 1) Օտարերկրացիներին հպատակութեան հաւասար իրաւունք տալու համար որոշել 5 տարի։ 2) Ազգային ժողովում (Volksraad) ձայների չորրորդ մասը յատկացնել ոսկու հանքեր ունեցող տեղերի ներկայացուցիչներին։ 3) Հոլլանդացիները և անգլիացիները ազգային ժողովում հաւասար իրաւունքներ ունենան։ 4) Նոր և հին քաղաքացիները հաւասար իրաւունք ունենան նախագահի և ուրիշ ընտրութիւնների ժամանակ։ Եթէ այդ պահանջները ընդունվեն, այն ժամանակ կոնֆէդէրացիա կը հրաւիրվի երկու կառավարութեան ներկայացուցիչներից՝ վիճելի հարցերը քննելու համար։ Այդպիսով «Times» լրագրի հաղորդած լուրը տարբերվում է ուրիշ լրագիրների լուրերից, որոնք հաղորդում էին, թէ Անգլիան պահանջել է ընդունել իր գերիշխանութեան իրաւունքը և զինաթափ անել բոէրներին։

—«Times» լրագիրը հաղորդում է, թէ վերջին ժամանակներս Կ. Պոլսում տեղի են ունենում ամեն օր մինիստրական խորհրդի նիստեր։ Ինչպէս երևում է այդ խորհուրդների գլխաւոր առարկան է՝ երիտասարդ թիւրքերի հարցը։ Միջոցներ են որոնում նրանց թիւրքիա վերադարձնելու համար։

—Էստէրհազի նորից դուրս եկաւ իր մերկացումներով։ Վերջին օրերս Լոնդոնի լրագիրներում տպված է. «Բօրդէրօն և ուրիշ միւս դոկումէնտները գրել եմ ես իմ մեծաւորների հրամանով, իսկ բօրդէրօն՝ յատկապէս գեներալ Մերսիէի հրամանով»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

8 սեպտեմբերի

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ։ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան 3½ ժամին ճանապարհ ընկան Բէրլնստորֆ ամրոցից, ամբողջ արքայական ընտանիքի ուղեկցութեամբ, Կոպէնհագէն, ուր 4 ժամ 10 րոպէին ջերմ կերպով հրաժեշտ տալով բոլորին, մտան Կայսերական «Полярная Звѣзда» շոգենաւը։ Ճունաց Նիկոլայ արքայորդին ուղեկցում էր Կայսերական Զոյգին։ 4½ ժամին արքայական ընտանիքը ճանապարհ ընկաւ Բէրնստորֆ։

ԹԷՕԴՕՍԻԱ։ Այստեղ եկած Սևծովեան նաւատորմը կը մնայ այստեղ մինչև սեպտեմբերի 10-ը։

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ։ Այսօր նահանգական դատարանը վճիռ կայացրեց՝ Մոզդոկի բանտապետ Մաքսիմովի և Զապտիեվ, Կուշներէնկո, Սերգէյենկո, Մասլակով և Սամսոնով վերակացուների գործի վերաբերմամբ։ Դրանք բոլորն էլ մեղադրվում էին բանտարկեալներին տանջանքներին ենթարկելու համար։ Բոլորն էլ մեղաւոր են ճանաչված և դատապարտված են, Մաքսիմով՝ իրաւունքներից զրկվելուն և երկամեայ բանտարկութեան, չորս վերակացուները դատապարտված են իւրաքանչիւրը երեքամեայ բանտարկութեան, իսկ հինգերորդը, Սամսոնով—երկուամսվայ բանտարկութեան։

ՊԱՐԻԶ։ Նախագահ Լուբէ ցուցահանդէսի շինութիւնները տեսաւ և առաջարկեց աշխատանքների կառավարիչներին եռանդով գործել, որպէս զի Ֆրանսիան 1900 թվին հնարաւորութիւն ունենայ ապացուցանելու իր հիւրերին, որ նա նոյնպիսի զօրեղ և աշխատասէր ազգ մնաց, որպէս էր առաջ, և թէ ժամանակաւոր երկպառակութիւնները չարգելեցին նրան իրագործելու առջադիմութեան և խաղաղութեան գործը։

Բարձրագոյն դատարանի յանձնաժողովը իր նախագահ նշանակեց Բերանժէին, իսկ ասէսորներ նշանակվեցին Շօվէ, Կորդելէ և Կազօ։ Նախագահը և ասէսորները սկսեցին դօսիէն ուսումնասիրել։

ԲԷԼԳՐԱԴ։ Պետական դաւաճանութեան վերաբերեալ գործը։ Ժիվկովիչ և Նովակովիչ մեղադրվողների պաշտպանը իր գայրոյթն է յայտնում սպանութեան փորձի առիթով, որը դատապարտում են բոլոր սերբերը, բայց նա չէ հաւատում, որ պետական դաւաճանութիւնը Օբրէնովիչների դէմ լուրջ բնաւորութիւն ունենայ, որովհետև նրանք երկրին մատուցած իրանց ծառայութիւնների համար ժողովրդի սէրն են վայելում։ Ապա պաշտպանը ցաւակցութիւն է յայտնում այն բանի առիթով, որ ոստիկանութիւնը չը կարողացաւ սպանութեան փորձի առաջն առնել. ապա քննում է Ժիվկովիչի վրա բարդված մեղադրանքները, որի արարքները, եթէ մինչև անգամ նրանք ապացուցված լինեն, ենթակայ չեն քրէական օրէնքների 87-րդ յօդուածի մէջ յիշած պատժին։ Իր պաշտպանողական ճառը փաստաբանը վերջացրեց՝ առաջարկելով արդարացնել մեղադրվողներին, մի և նոյն ժամանակ դատաւորների ուշադրութիւնը գարձրեց այն հանգամանքի վրա, որ Նովակովիչ արբեցող է, և այդ պատճառով պատասխանատու չէ իր արարքների համար։ Աւագ քահանայ Զուրիչի պաշտպանը, փաստաբան Բաիչ, մատնացոյց արեց Զուրիչի և չէրնօգորիական իշխանի մէջ գոյութիւն ունեցող հակառակութեան վրա, ասեց թէ ստուեր գցող ոչ մի գրագրութիւն չէ գտնված. Զուրիչ ցանկանում էր միայն փոփոխութիւններ կառավարութեան մէջ. մինչև անգամ եթէ նա յայտնած լինէր հակադինաստիական հայեացքներ, նրանք անհետևանք են մնացել, և այդ պատճառով պատժի ենթակայ չեն։ Մեղադրողի վկայ Կրասովիչ խաբեբայ է, որը սեփականել է ուրիշի անունը։ Մնացած մեղադրվողների պաշտպանները պահանջում էին արդարացնել իրանց կլիէնտներին։

ՄԱԼՄԷ։ Գերմանական կայսրը «Հօհէնցօլէրն» նաւով եկաւ 8½ ժամին երեկոյեան, փոթորկից ճանապարհորդութիւնից յետոյ։ Թագաժառանգ պրինց Գուստավ, որ սպասում էր կայսրին, տեղեկութիւն ստացաւ, թէ կայսրը ափ կիջնի վաղը և ուղղակի յատուկ գնացքով կերթայ Սնօգհօլմ ամրոցը։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Օրանժեան հանրապետութեան մի քանի բարձրաստիճան օֆիցէրներ եկան այստեղ և խորհրդակցեցին գլխաւոր հրամանատար գեներալ Ֆուրէրի հետ։

ՐԷՆՆ։ Դրէյֆուս դուրս եկաւ բանտից 3 ժամին և նստեց Նանտի երկաթուղիական գընացքը։ Դրէյֆուսի հեռանալը աննկատելի անցաւ։

ՄԱԼՄԷ։ Առաւօտեան 6 ժամին Վիլհէլմ կայսրը ափ իջաւ. դիմաւորեցին նրան թագաժառանգ պրինցը, շատ բարձրաստիճան անձինք և ժողովուրդը։ Կայսրը գնաց Սնօգհօլմ կալուածքը, ուր կը մնայ մինչև ուրբաթ։

ՊԱՐԻԶ։ Դրէյֆուս դուրս եկաւ բանտից առաւօտեան 2½ ժամին, նստեց կառքը իր ազգականներից մէկի ուղեկցութեամբ և զարտուղի ճանապարհներով գնաց երկաթուղիական կայարանը։ Նրա հեռանալու ժամանակ ոչ ոք ներկայ չէր։ Դրէյֆուս իր ուղեկցի հետ նստեց Նանտ գնացող գնացքը։

9 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հակաժանտախտային յանձնաժողովից յայտարարվում է, որ սեպտեմբերի 8-ին կայացաւ յատուկ գիտնական-բժշկական խորհրդակցութիւն, որին առաջարկվեց քննել Սատրախանի նահանգի Կոլօբօվկա գիւղի մէջ երևացած հիւանդութեան վերաբերեալ փաստերը։ Դրված հարցի վերաբերմամբ ներկայ եղողների կարծիքները բաժանվեցին. անդամների փոքրամասնութիւնը այն եզրակացութեան եկաւ, որ Կոլօբօվկա գիւղում յայտնված հիւանդութիւնը պէտք է սուր վարակիչ հիւանդութիւն համարել, որը նման է, որքան կարելի է դատել տեղի վրա կատարած հետազօտութիւններից, խուլերաւ ժանտախտին։ Իսկ խորհրդակցութեան անդամների մեծամասնութիւնը այն համոզմունքը յայտնեց, թէ խորհրդակցութեանը ներկայացրված փաստերը բաւարար չեն ոչ միայն նրա համար, որ վերոյիշեալ գիւղում արդէն դադարած սուր-վարակիչ հիւանդութիւնը ժանտախտ համարվի, այլը և առհասարակ գիտնական ճշդութեամբ որոշելու համար եղած հիւանդութիւնների բնաւորութիւնը։

Ի նկատի ունենալով այն որ խորհրդակցութեան բոլոր անդամները հնարաւոր չը համարեցին, առաջարկված փաստերի հիման վրա, կտրական կարծիք յայտնել, խորհրդակցութիւնը որոշեց, լրացուցիչ տեղեկութիւններ ժողովելու համար, Կոլօբօվկա գիւղն ուղարկել խորհրդակցութեան անդամներ բժշկապետ պրոֆէսօր Վինօկուրովին և զինուորա-բժշկական վարչութեան բակտերիօլոգիական լաբօրատորիայի կառավարիչ Բաչէվսկուն նախկին տարափոխիկ հիւանդութեան ծագման պայմանները և ընթացքը ուսումնասիրելու համար, իրաւունք տալով նրանց այն դէպքում, եթէ նրանք անհրաժեշտ կը համարեն, իրանց աշխատանքներին մասնակցելու համար, հրաւիրել առողջապահական հարցերին վերաբերեալ մասնագէտ պրոֆէսօր Շիդլովսկուն։ Կոլօբօվկա գիւղը ուղարկվող վերոյիշեալ բժիշկներին խորհրդակցութիւնը յանձնարարեց հետազօտել գործը իր ամբողջ ծաւալով, յանձնաժողովի նախագահի ուղարկած մատնագէտների հետ միասին, նոյնպէս և հիւանդութեան սկսվելու րոպէից գիւղում գտնվող անձանց հետ։

ՊԱՐԻԶ։ Բարձրագոյն դատարանի յանձնաժողովի բիւրօն շարունակում էր առաւօտեան և կէսօրից յետոյ քննել զօկոմէնտները, բոլորը գաղտնի պահելով,

Բերանժէ գնաց բանտը հարցափորձի ենթարկելու Գեբէնին։

ՊԱՐԻԶ։ «Ազգային գործակալութիւնը» հրատարակում է Դրէյֆուսի հետևեալ յայտարարութիւնը. «Հանրապետութեան կառավարութիւնը վերադարձրեց ինձ ազատութիւն։ Այդ ազատու-

թիւնը ինձ համար ոչինչ է, առանց պատուի։ Այսօրվանից ես կը շարունակեմ աշխատել, որպէս զի ուղղեմ դատաստանական սարսափելի սխալը, որի զոհ ես դեռ ևս մնում եմ։ Ես կամենում եմ, որ ամբողջ Ֆրանսիան իմանայ վերջնական դատավճռից, որ ես մեղաւոր չեմ։ Իմ սիրտը կը խաղաղվի միայն այն ժամանակ, երբ չի մնայ ոչ մի Ֆրանսիացի, որը վերագրէր ինձ ուրիշի կատարած այդ զզուելի յանցանքը։

ԱԼՃԻՐ։ Կէս գիշերին «Antijuife» վիլլայի առջև տեղի ունեցաւ ընդհարում Դրէյֆի և նրա կողմնակիցների մէջ մէկ կողմից, և ոստիկանութեան մէջ միւս կողմից։ Մի քանի մարդիկ վիրաւորվեցին։ Մի քանիսներին ձերբակալեցին։

ԱԼՃԻՐ։ Դրէյֆին և նրա հաւատակիցները դուրս եկան քաղաքից և գնացին դէպի Վիլլան։ Դրէյֆին ապա հեռացրեց իրանից իր բարեկամներին, որպէս զի նրանք հրացանի հարուածների տակ չը մնան, եթէ նրա վրա յարձակում գործեն։ Վերադառնալով քաղաք, նրանք այնու ամենայնիւ, ընդհարվեցին ժանդարմների հետ և սկսեցին քարեր գցել։

ԱԼՃԻՐ։ Մաքս Դրէյֆ, գալով իր հաւատակիցների հետ, ցոյց անելու համար զինուորական կլուբի առաջ, ուր հրաժարական տուող գեներալ Լարշէի հաւատար ճաշ էր տրվում, յետ մղվեց ոստիկանութիւնից։ Նա այն ժամանակ գնաց հրէական թաղը, ուր և տեղի ունեցաւ խառնակութիւն. հրէաները նոյն միջոցով պատասխանեցին։ Զօրքերը ստիպված էին զէնքի դիմել։ Վիրաւորված են երեք ոստիկաններ։ Դրէյֆին, վերադառնալով Վիլլան, քաղաքային դռների մօտ հանդիպեց զինուորական գնդին։ Այդտեղ էլ նոր խառնակութիւն սկսվեց, երկուսը վիրաւորվեցին։ Վերջապէս, 11 ժամին կարգը վերականգնվել։

ՆԱՆՏ։ Դրէյֆուս ժամանեց առաւօտեան ժամի 8-ին Մաթիէ Դրէյֆուսի, ոստիկանութեան դիրեկտոր Վիգիէի և մի ոստիկանի ուղեկցութեամբ։ Ոչ ոքին նախօրօք իմաց չէր տրված։ Դրէյֆուս և իր ուղեկիցները գնացին բուֆէտ, յետոյ նստեցին գնացքը որ 8 ժամ 58 ր. պիտի գնար Բօրդօ։ Նրանք մնան առաջին կարգի ընդհանուր բաժինը, որը արդէն բռնել էին միւս ճանապարհորդները, որպէս զի ուշադրութիւն չը գրաւեն։ Վիգիէ և ոստիկանական ագենտը առաջին կայարանում հեռացան, թողնելով Դրէյֆուս եղբայրներին միայնակ։ Ենթադրում են, որ նրանք մի որ և է կայարանում կիջնեն, որպէս զի անյայտ մնայ այն տեղը, ուր գնում են նրանք։

—

Սեպտեմբերի 1-ին ներքին փոխառութեան 67-րդ տիրաժ ընկած սերիաների հաւարները։

00026	03887	07479	11064	15141
00058	03966	07576	11135	15152
00166	03967	07651	11201	15153
00270	04029	07690	11231	15162
00438	04069	07755	11277	15296
00493	04072	07790	11378	15473
00543	04184	07804	11423	15530
00559	04251	07816	11553	15549
00604	04339	07849	11570	15609
00610	04509	07944	11654	15640
00672	04565	08002	11772	15984
00930	04630	08070	11911	16106
01149	04703	08348	12010	16164
01200	04708	08506	12098	16263
01240	04766	08724	12202	16314
01245	04832	08760	12237	16407
01293	05352	08779	12292	16454
01394	05385	09019	12331	16777
01413	05388	09067	12401	16835
01503	05555	09280	12514	16949
01506	05627	09426	12545	17224
01545	05650	09488	12551	17370
01566	05719	09573	13389	17415
01694	05763	09625	13396	17447
01696	05795	09753	13417	17531
01745	05960	09813	13528	17556
01805	05999	09843	13624	17632
02080	06007	09973	13641	17965
02112	06139	10015	13861	17975
02369	06266	10068	13929	18060
02399	06452	10076	13935	18093
02639	06494	10077	14154	18242
02801	06515	10112	14205	18351
02923	06649	10123	14259	18504
03055	06674	10300	14365	18526
03077	06941	10553	14480	18722
03146	06943	10612	14540	18839
03181	07032	10782	14654	18969
03256	07185	10807	14776	19133
03414	07215	10851	14852	19165
03459	07217	10856	14913	19245
03478	07263	10860	14936	19491
03539	07428	10878	15000	19624
03591	07462	10964	15043	19981
03844	07476	10967	15104	

Ժամանակաւոր խմբագիր՝
ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
„Վանայ Սազ"
Բ. մաս
Գ. ՇԷՐԷՆՑԻ
Գինն է 75 կ.
Ա. և Բ. մասերը միասին 1 ր. 50 կոպէկ։
Գիւել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія армянскихъ книгъ, կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens.
1—10

Մի Հաշուապահ,
որը գիտէ ռուսերէն, հայերէն և վրացերէն լեզուներ՝ տեղ է որոնում։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։ 1—2

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
Ցանկանում է քաղաքից դուրս կօմպանիօնկայի պաշտօն ունենալ, կամ պարապել 7—9 տարեկան երեխաների հետ։ Գիտէ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն և մուզիկա։
Հասցէն—Լաբօրատօրնայա փողոց, տուն Ցուրինովի, № 5. հարցնել բակում, աջակողմը։
4—5

Վլադիկավկազի հայոց ուսումնարանի համար հարկաւոր է ուսուցչական սեմինարիան աւարտած կամ ցէնղաւոր և փորձված մի ուսուցիչ, շաբաթական 25 դասով, տարեկան ռոճիկ 500 ռուբլի։ Դիմել՝ Владикавказъ Завѣдывающему Армяно-Григоріанскимъ церковнымъ училищемъ Д. Ноньяну, կամ Блогочинному священнику М. Мираньянцу.
3—5

ԹԻՖԼ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Նոր լոյս տեսաւ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՑԻՆ, թարգմ.
օր. Շ.-Տ.-Ն. . . . — 5 կ.
ՀՐԷԱՑ ԱԲՆԷՐԸ, թարգմ. օր. Շ.-Տ.-Ն. — 3 »
ՔԱՐ ՍԻՐՏ » » » — 25 »
Անդամ գրվողը ՍՏԱՆՈՒՄ է ՏԱՐԵԿԱՆ 8 ՌՈՒԲԼՈՒ ԳՐՔԵՐ, ընտրելով ընկերութեան հրատարակութիւններից և ՎՃԱՐՈՒՄ է ՏԱՐԵԿԱՆ 6 ՌՈՒԲԼԻ։
Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ Tiflis, (Russie), Société de la publication des livres Arméniens.
4—5

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԷՐՑՖԷԼԴ
Մաղերեան փողոց, № 5.
որ մասնագէտ է կաշու, միզասեռական (էլեկտրականութեամբ), վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5— 8 ժ.
32—60

Մանկական Պարտէզ-Ուսումնարան եւ Պանսիօն
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ԲԱԳՈՒ
Ընդունվում են երեխաներ և պատրաստվում օրիորդաց և տղայոց գիմնազիայի, ռէալական դպրոցի և այլ ուսումնարանների համար։
Մանկական Պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տ.) Ֆրեբելեան սիստեմով։
Ընդունվում են գիշերօթիկ և կիսագիշերօթիկ երեխաներ։
14—15

Լոյս տեսաւ երկրորդ (բարեփոխած և լրացրած) տպագրութեամբ
«ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ Ա. ԳՐՔՈՅԿԸ»
Պետական միջնակարգ դպրոցների պատրաստական դասարանների համար։ Սա ընդունված և թոյլատրված է որպէս կրօնի ձեռնարկ հոգևոր իշխանութիւնից և Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուից։
Շուտով ժամուլի տակ կը մտնի «Դասագիրք կրօնի Բ. դրքոյկը. հին և նոր ուխտի ս. պատմութիւններ» խորագրով, առաջին և երկրորդ դասարանների համար։
1—5 Եզնիկ ա. ք. Երզնկեան

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Պ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ
ՏԻԿ. ԿԱՏԱՐԻՆԷ Խ. ԼԻՍԻՑԵԱՆ
Բաց է անում Թիֆլիսում
◆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ◆
Երկու սեռի մանուկներին պետական միջնակարգ դպրոցների համար պատրաստելու նպատակով։ Ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 26-ին, ուսումը սեպտեմբերի 6-ին։ Ներկայ ճեմարանական թուականին հիմնադրուելին, իր երեխաների հետ միատեղ պարապելու համար, ընդունում է միայն առաջին և երկրորդ տարի ուսում առնող տղաներին և աղջիկներին։ Աշակերտների թիւը սահմանափակված է։ Պայմանները կարելի է իմանալ Սերգիեվսկայա և Սաղօվայա փողոցի անկիւն՝ սեփական տուն № 20/29 առաւօտեան ժամը 10-ից մինչև 2 ժամ և երեկոյեան ժամը 5-ից մինչև 7 ժամ։ 7—11

Եղբարք Ե. եւ Մ. Միրզաբէկեանցների
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԲԱԳԻՈՒՄ
Ի նկատ առնելով, որ տարէց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը գնալով մեծանում է, մենք, որպէս զի դիւրութիւն լինենք տուած մեր մշտական գնողներին՝ վճռեցինք Թիֆլիսում (Հալաբարի կամուրջի մօտ, տուն Իսարլովի) բանալ սեփական խանութ, որտեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաընտիր տեսակները։ Շնորհիւ այդ պահանջի, մենք հնարաւորութիւն ունենք ամենաընտիր պապիրոսներ և ծխախոտ ծախել աւելի էժան գներով։
Օտարաքաղաքացիք իրանց պատուէրներով դիմում են՝ Тифлисъ, табачный магазинъ Бр. Мирзабековыхъ.
Պատուէրները կատարվում են ճշդութեամբ և շուտ։ 9—10

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ
ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ
Սկսել է իր գործունէութիւնը,
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ՝
ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգէկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ։
Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի Հէյբաթում։
Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տելէֆոն № 749), գործարան. տելէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տելէֆոն № 451. (Ե. Հ. Հ)

Բժշկարար Կէֆիր եւ Կումիս
Օ. ԿՕՐՕՆԱ
Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէդալների՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար։ Կարելի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների տնտեսական ընկերութեան խանութին կից։
Ուսուցիչներին, սպասաւորներին և տնտեսական ընկ. անդամներին կը լինի զիջում։ Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայացնեն բժշկից առանձին դեղատոմս։
Ցանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել։ 3—50

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԿՕՄՊ. Մոսկվայում։
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆ
Գլիցերինի փափկացնող յատկութիւնը այնքան յայտնի է, որ կարիք չունի նորից գովելու։ Գլիցերինը առաւել ՕԳՈՒՏ է ԿԱՇԻՆ ՓԱՓԿԱՑՆՆԵԼՈՒ համար։
Գլիցերինի սապօնը չէ պարունակում իր մէջ ոչ ալկալական, ոչ էլ ուրիշ որ և է կծու մասեր, այդ պատճառով էլ նա մարմնին մի առանձին զովութիւն է պատճառում, պահպանում է կաշի փափկութիւնը և աւելացնում է նրա սպիտակութիւնը։ Կանանց և երեխաների տուալէտի համար՝ այդ սապօնի կամենանման և մեծ քանակութեամբ փրփուրը ծառայում է իբրև ամենալաւ միջոց լուացվելու համար։
Առհասարակ մեր գլիցերինեան սապօնը պարտական է իր յատկութեամբ իր մէջ պարունակվող մաքրված նիւթերին, որից նա պատրաստված է, իբրև ապացոյց կարող է ծառայել այն, որ նա այդպիսի հռչակ է ստացել և գրաւել է ժողովրդի առանձին ուշադրութիւնը։
ԶԳՈՑՇ ԿԵՆԱԼ ԶԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ M. 87666

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Сентября 1899 г. Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.